ՄԱՐՍԻԼԻՈՅ ԳՈՐԾԱԴՈՒԼԸ

Մարսէյլլի նաւահանգստի գործաւորներու գործադուլը տակաւին կը շարունակուի, մինչ կայ որ ուրիշ արհեստաւորներ ալ անոնց միանան։

«Ինթինասիոնալ» ընկերութեան երկու շոգենաւերը Մարսիլիա և Ալժիր, որ երկուշաբթի օր Նափոլի հասան, կեցած իրենց բեռներն ուրիշ բան չունին հանել գործաւորներու պակասութենէն։

ԱՆԳԼԻՈՅ ԹԱԳՈՒՀԻՈՅՆ ՄԱՀՈՒԱՆԸ

Անգլիական կառավարութիւնը որոշած է թագուհւոյն մահուան նուիրուած յիշատակարան մը կառուցանել Պուքինկէմի պալատին դիմաց և մինչեւ ատոր հոն կանգնել թագուհւոյն արձանը։

Այս չնախատեսուած ծախքերը ազգային հանգանակութեամբ պիտի վճարուին։

ԽՌՈՎՈՒԹԻՒՆՔ Ի ՌՈՒՍԻԱ

Ս. Բեդերսպուրկէ կը հեռագրեն թէ ուսանողներու կողմէ եղած խառնակման ցոյցերը յեղափոխական շարժում մը կերպարանը առնելու վրայ են։

Այս կերպով ուսանողներու միացած գործադուլը և ամբողջ միայն մէկ տարին չատ ծանր չփոխուելով։

Քաղաք գիւղերու միջամտութեամբ հազիւ կարելի եղաւ այդ ցոյցին առաջքը առնել։ Ուսանողներ և քաղաքացիներու կողմէ 66 վիրաւորեալներ ունեցած են։

Ուսանողները Թօլսթոյի բանադրութեան դէմ բողոքելու պատրաստ կը գտնուին։

ԱՆԳԼՕ ՌՈՒՍԱԿԱՆ ՄԻՋԱԴԷՊԸ·

Կը յիշուի թէ, ատկէ մէկ երկու շաբաթ առաջ, Չինական հողերուն վրայ, քաղաքական միջադէպ մը տեղի ունեցած էր Ռուսներու և Անգլիացիներու միջև, միջադէպ մը՝ որուն վրայ շատ խօսուեցաւ և վայրկեան մը կարծուեցաւ թէ ատկէ ծանր հետեւանքներ ունենայ։

Խնդիրը ամէնուն շատ պարզ էր իրենին։

Անգլիական երկաթուղին անօրէնը ըսած էր սահմանագիծ մը չխեղդել անդին վրայ, երբ Ռուս կառավարութիւնը գիտել տուաւ թէ այդ հողերու սահմանաշրջանին մէջը ինք ըլլալուն, Անգլիացիները իրաւունք չունին որ և է շէնք մը հոն կառուցանել։

Այս գիտողութեան ըստ հակառակ քակուեցաւ և նոյն ժամանակ Անգլիական ոստիկանական հրամանատարը պատուիրեց չխանգարել շարժումներ և խօսուեցաւ ի հարկին զինու զօրութեամբ պաշտպանելու աշխատող գործաւորները։

Ռուս հրամանատարը անմիջապէս բողոքեց այս անձնիշխանութեան դէմ և յայտարարեց թէ զինուորական միջոցներով պիտի պաշտպանէր իր իրաւունքները։

Երկու հեռագիրները կը ծանուցանեն թէ Ռուսներու զաւաթում որոշուած և պայմանով փակուած է միջադէպը։

# Ա Զ Դ

Եգիպտոսի, Սպաստահմանի և կովկասի արդէն բաժանորդներէն անոնք որ մինչև ցարդ վճարած չեն իրենց բաժանորդագինները, կը խնդրուի որ հաճին անյապաղ վճարել։

Եգիպտոսի բաժանորդները կրնան Մանսուր—Ռուքթով ղրկելով իրենց բաժանորդագինները. թերթին վերը նշանակուած հասցէին։

# ԿՈՒԶԷ՞Ք ԲԱՂԴԵՐՆԻԴ ՓՈՐՁԵԼ

Գնեցէք ժողովրդական Տարեցոյցէն հատ մը, որ շատ մը զուարճալի և օգտակար յատուածներու հետ կը գտնուի նաև գեղեցիկ բաղդացոյց մը ղէկար եղած բացատրութեամբ։

Այն Տարեցոյցէն և Պարզ Օրացոյցին փափագողք թող հաճին դիմել առ Տ. Օհան Խիտամեան, որ պատրաստ է ուրիշ ամէն տեսակ գրքերու մասին յանձնարարութիւնք փութով կատարել փոքրիկ կանխավճարով մը։

Երջանիկ քաղաքներէն Տարեցոյցի և Օրացոյցի մասին եղած յանձնարարութեան համար դրամի տեղ թղթադրոշմ կընդունուի։

| | |
|---|---|
| Տարեցոյցին գինը | 10 Դրշ. ոսկ |
| Պարզ օրացոյցինը | 2 „ |

# Ա Զ Դ

Շատերու կողմէ յայտնուած փափաքի մը գոհացում տալու և մեր ընթերցողներու գիւրութիւն մը ընծայելու նպատակով, այսուհետև մեր թերթը հատով պիտի ծախուի Շարա Ապտ—էլ—Ազիզի սկիզբը Պ. ԿԱՐԱՊԵՏ ԵՐԶՆԿԱՑԵԱՆԻ խանութը ինչպէս նաև Պօրթ—Սէյ փողոցի ծայրը և Թըրամվէյներու կայարանին մօտ ծխախոտավաճառ Պ. ՄԱՐՏԻՐՈՍ ԳԱՍԱՊԵԱՆԻ քով։

Le Gérant J. MUNIER

# ՊԱՆԳ ԼԻՕՆԷԶ

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԱԼ ԵԳԻՊՏՈՍԻ

## Մ. ՍՕՍՕՅԵԱՆ

Լիոնի համբաւաւոր դրամատունը, այս անգամ ունեցաւ իր Եգիպտոսի գործակալն ալ, Տ. Միհրան Սօսոյեան, որ իր հրապարակային ցոյց տուած պարկեշտ գործունէութեամբն ամենուն վստահութիւնը կը վայելէ։

Այն գործակալութիւնը, 11 Սեպտ. թիւ իրեն յանձնուած և Լիոնի քաղաքացիութենէն պաշտօնապէս վաւերացուած փոխանորդագրի համաձայն, պիտի կատարէ Պանգ Լիոնէզի միջոցաւ ամէն տեսակ դրամական և Բաէսի Ցօնսիյէի, մէկ ալ Բարիզի և Գաղղիական ամէն արժեթղթերու գործողութիւնները, գանձումներ։ Ամենական չնչին զամարի մը խնայողութեամբ ձեռք կը բերուի քիչ ատենէն, պահեստի բաժնեթուղթ մը, վիճակահանութեամբ երաշխաւորուած։

Փափաքողները հաճին դիմել Նիւպարի վրայ փառաւորեան Բաթթաղիի գրասենեակը։

Թղթակցութիւն և կամ դրամ ղրկել հետևեալ հասցէին։

Մ. ՍՕՍՕՅԵԱՆ
Ի ԳԱՀԻՐԷ

# ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Պ. ՆԻԿՈԴԻՄՈՍ

Վերջերս հաստատուած ի Գահիրէ, Գաֆէ տը լա Փօսթի կից, Բ. յարկ, թիւ 9 գաւիթին։

Կը բժշկէ բերնի և ակռայի ամէն տեսակ հիւանդութիւնները։ Աղքատները ձրի կը դարմանէ ամէն օր, առաւօտեան ժամը 8էն 9։

# ՊԷԼԱԵԱՆ-ՇԻՇՄԱՆԵԱՆ ԸՆԿ.

### ԱՄԵՐԻԿԵԱՆ ԴԵՐՁԱԿՆԵՐ

ԱՐԱՆՑ ԵՒ ԿԻՆԱՆՑ

ԵՒ ՁԵՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԴՊՐՈՑ

Աալէրնի մեծ պողոտային վրայ Տայիրայի Սանիյէի դիմացը, նախկին էլէկտրական գործիներու վաճառատունը։

Վերջերս Ամերիկայէն հոս եկած հաստատուած ըլլալով կը յայտարարենք արդէն հասարակութեան թէ՝ պատրաստ ենք գոհացնել մեզ դիմող Պատ. յաճախորդները, գործի մաքրութեան, գիներու չափաւորութեան և ճշդապահութեան կողմէն։

Մեր գործատեղւոյն մէջ կ'աւանդուի նաև ձևագիտութեան դասեր ամերիկեան ամենավերջին կատարելագործուած միթոտով,

Մանրամասնութեանց համար դիմել մեր գործատեղին։

# ՃԱՇԱՐԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ

## ՄԻՀՐԱՆ ԵՒ ԵՂԲ. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Շարա Ապու-Սաայտի

Նիւպ-Ֆէնիվերակ ջերմուկներու դիմացը.

Օդասուն ու զուարճալի դիրք. մաքուր ու փայլուն սպաս. համեղ ու անդարար կերակուրներու զանազանութիւն, անխարդախ պատրաստութիւն. նոր ճաշացուցակ մը գրաւիչ գիներով աշա՛ Գազանճեան եղբարց ճաշարանը։

Ով որ կ'ուզէ, փորձի համար մէկ անգամ թող դիմէ, վստահ պէտք է ըլլալ թէ մշտակայ յաճախորդը պիտի դառնայ հայկական ճաշարանին։

Տպ. «Միութիւն».— Թ. Ս. Փափազեանի


# ՏՊԱՐԱՆ ԱՐԱԽԱՒԱՆԻՆ

## Ի ԳԱՀԻՐԷ

ԱՊՏԻՆ ՓՈՂՈՑ, ՄՈՒԳԱԹԹԱՄԻ ՃԻՇԴ ԴԻՄԱՑ

### ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ

## ԹՈՐԳՈՄ Ս. ՓԱՓԱԶԵԱՆ

Այս նորակազմ տպարանին մէջ կը տպուին հայերէն ու եւրոպական լեզուաւ ամէն տեսակ հրատարակութիւններ, պարբերական թերթեր, յայտարարութիւններ, շրջաբերականներ, այցետոմսեր, մահազդեր, հարսանեաց հրաւիրագրեր, կանոնագիրներ, նամակագլուխներ, պահարաններ, հաշուեցուցակներ ևն.։

Ցանձնարարութիւնները կը կատարուին փութով, ամենայն խնամով եւ ճաշակաւոր տպագրութեամբ։

ՉԱՓԱՒՈՐ ԳԻՆԵՐՈՎ.